ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
«Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐ՝
_____ Դ. ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ
26.05.2026թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱՉԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԱՍՏՂԻԿ ՌՈԲԵՐՏԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ «ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՃԿՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՊՏԻՄԱԼ ՄՈԴԵԼԸ ՀՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ» թեմայով ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Աստղիկ Ռոբերտի Վարդանյանի «Կրթական գործընթացի ճկուն կառավարման օպտիմալ մոդելը ՀՀ հանրակրթական դպրոցում» թեմայով ատենախոսությունը և սեղմագիրը քննարկվել են Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստում (Արձ. թիվ 12, կայացած՝ 26.05.2026թ.):

Նիստին ներկա էին մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմը՝ ամբիոնի վարիչի ժ/պ մ.գ.թ., դոցենտ Լուիզա Խորենի Միլիտոսյանը, մ.գ.թ., դոցենտ Սուսաննա Պարգևի Ասատրյանը, մ.գ.թ., դոցենտ Նաիրա Վազգենի Պողոսյանը, մ.գ.թ., դոցենտ Մարինե Գեորգիի Միսկարյանը, մ.գ.թ., դոցենտ Աննա Լևոնի Մինասյանը, մ.գ.թ., դոցենտ Անահիտ Եղիշեի Արշակյանը, մ.գ.թ., դոցենտ Ալիսա Աղալարի Չիտչյանը, մ.գ.թ., դոցենտ Հարություն Արամի

Ճանճապանյանը, մ.գ.թ., դոցենտ Արեմնուհի Վաղարշակի Աբալյանը, մ.գ.թ., դոցենտ Արմեն Սերյոժայի Հարությունյանը, մ.գ.թ., ավագ դասախոս Անահիտ Պետրոսի Արնաուդյանը, մ.գ.թ., ավագ դասախոս Սիրանուշ Էդուարդի Ղազարյանը:

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում ընթացող բարեփոխումները հոչակել են անցում դեպի կարողունակահեն, մարդակենտրոն կրթություն, սակայն նորարարական մոտեցումների և փաստացի գործող կառավարչական մեխանիզմների միջև առկա է անջրպետ: Անցյալից ժառանգված կառավարման ավանդական մոդելը սպառել է իր ներուժը: ժամանակակից հանրակրթական դպրոցը դժվարանում է արագ արձագանքել հասարակության արագափոխ պահանջներին:

ՀՀ հանրակրթական դպրոցում կրթական գործընթացի կառավարման օպտիմալ մոդելի մշակման հարցը ներկայումս մեծապես մտահոգում է ոլորտի մասնագետներին: Այս խնդրի լուծման ուղիներից է կառավարման ճկուն մոդելի մշակումը և ներդնումը կրթության կառավարման բնագավառում: Այսպիսով, կառավարման ավանդական համակարգի սահմանափակումները և հանրակրթության ոլորտում ճկուն կառավարման մանկավարժական մոդելի մշակման հրատապությունը պայմանավորում են հետազոտության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակն է՝ տեսականորեն հիմնավորել, մշակել և հավաստել հետազոտություններով հանրակրթական դպրոցի կրթական գործընթացի ճկուն կառավարման այնպիսի մոդել, որը կհաղթահարի ավանդական վարչարարության անկատարությունը՝ երաշխավորելով կրթական համակարգի բնականոն զարգացումն ու բարձր արդյունավետությունը:

Ելնելով հետազոտության նպատակից, ատենախոսության հեղինակը սահմանել է հետևյալ խնդիրները՝ ուսումնասիրել կրթության կառավարման հարացույցների գիտատեսական հիմքերը, հիմնավորել կառավարման հոգեբանամանկավարժական մեխանիզմները և ղեկավարի կարողունակությունները, նախագծել կրթական գործընթացի կառավարման ճկուն մոդել, հետազոտություններով հիմնավորել նորարարական մոդելի արդյունավետությանը:

Աստղիկ Վարդանյանը գտնում է, որ արդի սոցիալական վերափոխումների պայմաններում հանրակրթական դպրոցի արդյունավետ գործունեությունը հնարավոր է ապահովել վարչարարական հրահանգավորումից դեպի կառավարման ճկուն հարացույցի, անշարժ ծրագրերից դեպի պլանավորման կարճաժամկետ պարբերափուլային ձևաչափի անցմամբ: Ճկուն կառավարման համակարգի կենսագործման պարտադիր նախապայմանը անվտանգ միջավայրի ձևավորումն է, մանկավարժական օժանդակումը և ուղղորդումը, ուսուցչի ստեղծագործական գործունեությունը, մշտական մասնագիտական զարգացումը, դպրոց-համայնք-ընտանիք համագործակցությունը:

Հետազոտության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ այն կրթության կառավարման տեսությունը ընդլայնում է նոր հիմնույթներով: Հեղինակը տեսականորեն հիմնավորվել է գործիքակազմի՝ պարբերափուլային պլանավորման, ակնառու կառավարման և հետահայաց զարգացնող վերլուծության մանկավարժական տեղայնացման հրամայականը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, առաջարկություններից, օգտագործած գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության ծավալը կազմում է 143 համակարգչային էջ:

Ներածությունում հիմնավորվել է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը, խնդիրները, օբյեկատը,առարկան, վարկածը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտությաև կառուցվածքն ու ծավալը:

Ատենախոսության առաջին՝ **«Կրթական գործընթացի կառավարման ճկուն մեթոդաբանության տեսական և համեմատական վերլուծություն»** խորագրով գլխում, որն ունի երեք ենթագլուխ, կրթական համակարգի կառավարումը ներկայացված է որպես հարափոփոխ գործընթաց, անցում է կատարում ավանդական կարծրացած վարչարարությունից դեպի կառավարման ճկուն համակարգ: Հիմնավորված է կառավարման ճկուն մոդելի կիրառման հրամայականը, որտեղ դպրոցը դիտարկվում է որպես ինքնակատարելագործվող կրթական միջավայր, ինչը թույլ է տալիս արագորեն արձագանքել

ժամանակակից անորոշություններին և ապահովել սովորողակենտրոն ուսուցում:

Իրականացված է միջազգային առաջատար փորձի խորքային վերլուծություն: Փաստարկված է, որ կառավարման օտարերկրյա հարացույցների մեխանիկական պատճենումն անթույլատրելի է և փոխարենն առաջադրվում է համակցված մոտեցում: Այն ենթադրում է պետական միասնական չափորոշիչների և հաստատության ներքին մեխանիզմների ներդաշնակ համադրում՝ որը հաշվի կառնի տեղական մշակութն և նրա առանձնահատկությունները: Ներկայացված և հիմնավորված է դպրոցի ղեկավարի կարողունակությունների կենսական նշանակությունը: Վերլուծված են ճանաչողական ճկունության, զգացմունքային բանականության և կենսական եռանդի դերակատարումները: Ապացուցված է, որ ավանդական վերահսկողությանը պետք է փոխարինեն կառավարչական օժանդակումը և ուղղորդող ուսուցումը, որոնք ուսումնական հաստատությունում ձևավորում են անվտանգ հոգեբանական մթնոլորտ և խթանում մանկավարժական կոլեկտիվի ստեղծագործական ներուժը:

Ատենախոսության երկրորդ՝ **«Հանրակրթական դպրոցի կրթական գործընթացի ճկուն կառավարման մոդելի մշակումը և գործառնական մոդելը»** խորագրով գլուխը ներկայացնում է հետազոտության առանցքային գիտական նորույթը: Այն բաղկացած է չորս ենթագլխից: Հեղինակը հիմնովին հրաժարվում է ավանդական մեխանիկական վարչարարությունից՝ առաջադրելով կառավարման ցանցային, փոխներթափանցող համակարգ, որը կառուցված է նպատակային, բովանդակային, գործընթացային-տեխնոլոգիական և արդյունքային-գնահատողական չորս ենթահամակարգերի օրգանական միասնության վրա: Այստեղ ներկայացվում է վերոնշյալ ենթահամակարգերի անընդհատ, պարբերափուլային և համազդեցիկ գործառնությունն ապահովող օպտիմալ մոդելը:

Հիմնավորված է մանկավարժական համագործակցության արմատական վերափոխման անհրաժեշտությունը: Ձևական, արձանագրային բնույթ կրող մեթոդական միավորումները փախարինվում են ինքնկազմակերպվող մասնագիտական ուսումնառության ճկուն համայնքներով: Ապացուցված է, որ կառավարչական հաջողության գրավականը երկարաժամկետ, քարացած պլաններից հրաժարումն է և անցումը կարճաժամկետ

աշխատանքային պարբերափոխումների, որոնց ավարտին հետահայաց զարգացող վերլուծությունը թույլ է տալիս մանկավարժական սխալը դիտարկել որպես հանրային մասնագիտական աճի անփոխարինելի աղբյուր: Հանրակրթական հաստատությունը բնութագրվում է որպես բաց էկոհամակարգ: Առաջադրվում է համագործակցության նոր հարացույց, որտեղ ծնողն ու համայնքը պասիվ սպառողից վերածվում են կրթական արժեքի գործուն համահեղինակների:

Ատենախոսության մեջ հեղինակը տեսականորեն վերլուծել և հստակեցրել է «ճկուն կառավարում» և «մանկավարժական աջակցություն» հասկացությունները՝ դրանք դիտարկելով որպես դպրոցի և ընտանիքի փոխկապակցված աշխատանքի արդյունք: Աշխատանքում մանրամասն նկարագրված են այն հոգեբանամանկավարժական գործոնները, որոնք խոչընդոտում են երեխայի լիարժեք ուսումնառությանը: Հատկանշական է, որ հեղինակի կողմից ցույց է տրված, որ կառավարման մեթոդները կենսունակ են միայն այն դեպքում, երբ ուղեկցվում են ղեկավարի կողմից իրականացվող մանկավարժական օժանդակմամբ և ուղղորդող ուսուցմամբ /կոուչինգ/, ուղղված են աշակերտների ուսումնական մոտիվացիայի բարձրացմանը և ծնողների ներգրավվածության ապահովմանը:

Ատենախոսության երրորդ՝ **«Հանրակրթական դպրոցում կրթական գործընթացի ճկուն կառավարման օպտիմալ մոդելի վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների անցկացում և արդյունքների վերլուծություն»** խորագրով գլխում վերլուծության են ենթարկվել հեղինակի կողմից ներկայացված մոդելի վերաբերյալ սոցիոլոգիան հարցումների արդյունքները:

Հետազոտության հավաստիությունն ապահովված է ք.Երևանի և ՀՀ տարբեր մարզերի /Շիրակ, Արմավիր, Արարատ, Կոտայք, Սյունիք/ հիմնական դպրոցներում իրականացված ծավալուն էմպիրիկ աշխատանքով: Հեղինակը կատարել է ուսուցիչների, վարչական աշխատողների և ծնողների հարցումներ, դիտումներ, դասալսումներ և փորձարարական դասեր, ինչի արդյունքում փաստացի ապացուցվել է առաջարկվող մոդելի արդյունավետությունը:

Աշխատանքի մեկ այլ կարևոր առավելությունն է մեթոդաբանական ամբողջականությունն ու գիտական մոտեցումների բազմազանությունը: Հեղինակը կիրառել է հետազոտության տարբեր մեթոդներ՝ դիտարկում, վիճակագրական տվյալների վերլուծություն, համեմատական վերլուծություն, ինչն ապահովել է առաջարկված մոդելի հավաստիությունը: Այս մոտեցումը թույլ է տվել բացահայտել ուսումնական դժվարությունների առաջացման պատճառները և դրանց դրսևորումները :

Ատենախոսության գործնական արժեքը պայմանավորված է նրանով, որ ներկայացված արդյունքները և առաջարկությունները կարող են կիրառվել դպրոցական պրակտիկայում՝ նպաստելով կառավարման գործընթացի դժվարությունների բացահայտմանը և դրանց արդյունավետ հաղթահարմանը: Առանձնապես կարևոր է, որ աշխատանքը նպաստում է կրթության ոլորտի աշխատողների անհատական առաջընթացին և կառավարման մշակույթի զարգացմանը: Ատենախոսը տիրապետելով բնագավառի գիտական նորույթներին, կարողացել է պատշաճ մակարդակով գնահատել առկա իրավիճակը, բացահայտել ոլորտում առկա հակասությունները, թերություններն ու բացերը, իր տեսանկյունից ներկայացրելով դրանցից ամենացայտուններն ու հիմնարարները:

Մշակված օպտիմալ մոդելը հուսալի տեսական հենք է հանրակրթական դպրոցի ինքնակազմակերպման, սոցիալական կապիտալի կուտակման և հետագա խորքային ուսումնասիրությունների համար:

Մշակված ճկուն կառավարման մոդելն ու ախտորոշիչ գործիքակազմը կիրառելի են ՀՀ հանրակրթական դպրոցների կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով: Արդյունքները կարող են ներդրվել տնօրենների ռազմավարական ծրագրերի, կրթական չափորոշիչների մշակման, բուհական ուսումնական ծրագրերի իրականացման և մանկավարժների վերապատրաստման գործընթացներում:

Ատենախոսն ունի 7 գիտական հոդված:

Արժևորելով ատենախոսի կողմից կատարած գիտական աշխատանքը, հարկ ենք համարում ներկայացնել մի քանի նկատառում՝

1. Ատենախոսության ներածությունում, ինչպես նաև սեղմագրում չեն ներկայացված հետազոտական մեթոդները:
2. Որոշ ձևակերպումներ վերանայման, հստակեցման և խմբագրման կարիք ունեն /էջ 4,5,6,109,112,113,116 և այլն /:
3. Աշխատանքի կատարելագործման տեսանկյունից ցանկալի կլիներ մանրամասնել դժվարությունները, որոնց հանդիպում են ուսուցիչները հեղինակի կողմից առաջարկած կառավարման մոդելը ներդնելիս, ինչը կհստակեցներ նրանց վերապատրաստումների ցանկը:
4. Ցանկալի կլիներ, որպեսզի ատենախոսության երրորդ գլուխը՝«Հանրակրթական դպրոցում կրթական գործընթացի ճկուն կառավարման օպտիմալ մոդելի վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների անցկացում և արդյունքների վերլուծություն» խորագրով բաժանել ենթագլուխների /հետազոտական աշխատանքի նախապատրաստում և անցկացում, արդյունքների ամփոփում/ և մանրամասնել կատարված աշխատանքը:
5. Կարծում ենք, որ ատենախոսության մեջ անթուլատրելի է օգտագործել «ՀՀ հանրակրթական դպրոցի կառավարման գործող մեխանիզմը տառապում է համակարգային կոշտություններից, որը ոչնչացնում է մանկավարժական նորարարությունը և օտարում հասարակությունը» արտահայտությունը /էջ116/:
6. Եզրակացությունները լիովին չեն արտացոլում կատարված աշխատանքի արդյունքները:
7. Հարկ ենք համարում ընդգծել, որ գլուխների ծավալը և կառուցվածքը զգալիորեն տարբերվում են: /տեսական մասը կազմում է 103 համակարգչային էջ, իսկ գործնականը՝ 38/:

Այդուհանդերձ, նշված դիտարկումները չեն նվազեցնում կատարված հետազոտության գիտական նշանակությունը: Աստղիկ Ռոբերտի Վարդանյանի «Կրթական գործընթացի ճկուն կառավարման օպտիմալ մոդելը ՀՀ հանրակրթական դպրոցում» թեմայով ատենախոսությունն ունի նշանակալի գիտական արժեք:

Եզրակացություն

Հետազոտության թեմայի արդիականությունը, նրա գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև ստացված արդյունքների հավաստիությունը և հիմնավորվածությունը թույլ են տալիս եզրակացնել, որ Աստղիկ Ռոբերտի Վարդանյանի «Կրթական գործընթացի ճկուն կառավարման օպտիմալ մոդելը ՀՀ հանրակրթական դպրոցում» թեմայով ատենախոսությունն ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, ունի կարևոր տեսական և գործնական նշանակություն, համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7 – րդ կետի պահանջներին և ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն » մասնագիտական թվանիշին, իսկ ատենախոսն արժանի է հայցվող մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ Ժ/Պ՝, Մ.Գ.Թ., ԴՈՑԵՆՏ **Լ. Խ. ՄԻԼԻՏՈՍՅԱՆ**

26.05.2026

Լ.Խ. ՄԻԼԻՏՈՍՅԱՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ:

Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Հ. Հ. ՓԻԼԱՎՋՅԱՆ**